հաշուոց ձուղից, յայտնի լինի է յօդուանց առաւել սիրելւոյդ և որ ինչ առաջիկայ անձկութիւն են, տեարց դատերաց, բացատիալ ևս է. ըստ որում աշխարհ թակարթալար պատահմամբ, ուսոի խոհեմաբար տեսանի յիմաստասիրութիւն Պեծանդրեայ, յասին թէ՝ «դուստր հարսնացու թէ և ինչ ոչ խօսեացի զանձնէ, լռութիւն նորա բազմախոսս է» Ընբուիցեն հարիւր աչք Արգոսի զգուշանալ ի պահպանութիւն Յովայ, իրրև զերինջ կայտառելոյ ի պատրանաց Ներսէսի»:

Արդ՝ որովհետև կոյսն եղեալ ընդ չափ ըստ առաքելոցն՝ և վառնդ ևս ի վերայ կայ, և հաստատեալ է ծնողն ի սրտի իւրում վասն ամենայնի պատճառաց, և մեք հայելով ի հանգամանս ամենայն, ի վիճակն ի ժամանակն ի յարմարութիւն և ի յօժարութիւն կամաց առնելեաց և ի խնդիր ձեր սիրելութեան և ազնիւ կնեաղին, ներելով յարիմք առ հրամանն՝ լինել լրումն կամաց ձերոց և որոց են առ այն իղձ խորհրդոց, ընտանեացն ասեմ նշանաւորաց:

Այլ մի՛ լիցի զանց առնել ըստ կանոնաց զնոքոք Սօրն Եկեղեցեաց նայեցեալ լինելոյն իրականութեանց և զօրութեան առաջադրեաց այնմ մանաւանդ չափմամբ չափելով դիւրեանց մեծանոնութիւն և պատիւ՝ ծանիցեն ևն:

Ողջ լեր Լին ընորհօք, որ և ինամք աղօթանուէր վասն ամենեցուն և բարօրութեան ձեր ցանկացող

Կաթուղիկոս ամենայն Հայոց
Վչտալի Եփրեմ:

Այս արդէն շատերից մի օրինակ է՝ թէ ինչպէս էին վարուում Հայոց Կաթուղիկոսք, երբ հանգամանքների այնպիսի վիճակում էին գտնուում ամուսնացողները, որ անհրաժեշտ էր լինում ներողամտաբար ուղղելու հնարների դիմել: Վերջին կաթուղիկոսները նման դէպքերում գործ էին ածում «ոչ յօրինակ այլոց» խօսքերը. սակայն բաղձալի է, որ միշտ յիշուին թէ այդպէս ներողամիտ լինելու պատճառներն և թէ կանոնազանցութեան թեթևացուցիչ ապաշխարանքները, որոնցով կարողանում են սիրայոյզ ամուսինները ամրացնել խոյս տալ վերջնական կորստից, զղջալ և պատուիրանապահութեամբ բարեկեցիկ լինել Հայոց Եկեղեցու ասուածային շնորհների տակ:

«Բայց՝ այսոցիկ բարւոյ աւանդութեանց հակառակելոյ առաջնոց Հարցն սրբոց՝ ոչ այլ ինչ է պատճառ, քան թէ ազիտութիւն և ինքնօրէն անձնահաճ կամապաշտութիւն՝ որք ոչ տեսին զառաջին պայծառութիւնս մինչ ողորմութեամբ Ցեսուն լի էր երկիր ..... »: *

(Շարունակելի)

Ա. ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆ:

ՊԱՏՄԱԿԱՆ

ԲԱԳՐԵՒԱՆԴԻ.

ՋՐԱՇԱՏ ԵՐԿԻՐ.

(Շարունակութիւն)

Ագրեւանդայ հիւսիսային լեռնաշղթայն Ջրաբաշխ ասուած է ինախնեաց, ամէն կողմ առատ ջրեր արձակելուն. հարիւրաւոր հովիտներ, լեռներ ու ապառաժներ, արեգիններ ու ծմակներ, տափարակներ և զառիվայրեր մէկ խօսքով դաշտ և լեռ, մեծ և փոքր ալբիւրներով զարդարուած են. ամէն վայր տարածուած, սիրուած են յրատակ, առուն, քաղցրահամ ջրեր, իւրաքանչիւր տեսարանի մէջ քեզ կներկայանայ գլգլացող ալբիւրի տակ մի, կարկաչող առուակ մի, սպացող առու մի, ոլոր մոլոր հոսող ջրուղի մի. ջրտջրտացող ղեղ և լայն ձորակ մի, գետեր և գետակներ, աղի, լեղի ալբիւրներ, ջրալից և ճահճային վայրեր, պըսպղուն փոքրիկ և մեծ լճակներ ու լճեր, Ա յոլիսի Ջրաշատ երկիր մի ասէլորդ է ա-

*. Ս. Ն. Շնորհալի. Ընդհ. էջ 71.

սել թէ որպիսի տեսակ տեսակ բանջարեղինօք և երիներանգ ծաղիկօք ու մարգագեօներով պճնուած է, զտեսողս կը դիւթէ։

Բունիս ամուն մարդ գաշտս, պիտի տեսնես բնութեան հրաշալիքը ինչ հիանալի գոյներով շքեղազարդած է շուրջդ։ այս ջրաբաշխի մեծ շնորհն է, որ սփռած է քալլեբուզ տակ, և քաղցր բուրմունքով զբեղ կարբեցնէ։ Մարիս ամսոյ առաջ անձրևներու հրաշալի շնորհն թողած՝ ջրաբաշխի ալբիւրներու հրաշալիքներու վրայ կը խօսիմ, շարունակէ ճանապարհդ, դեռ մարգահատակ լսուի և ծաղկանց մէջէն չանցած քեզ պատահեցաւ ճահճային վայր մի, ջրուած արտ մի, լճացող ջուր մի, գետակի մի աւազան, այդ միջոցին պիտի սոխակս կանգ առնել վայրկեաններով պիտի շեղիս, վեր, վայր պիտի շրջիս, հուն մի, անցք մի, կամուրջ մի պիտի որոնես, կը հաւատամ՝ երբ ասեմ քեզ թէ շատ անգամ ½ ժամ պիտի շեղիս, ճանապարհ որոնես։

ԳԵՏԵՐ

Բագրեւանդ ջրաշատ երկիր մի լինելուն ամեն մարդ կարող է գուշակել որ ունենալու էր իւր գետն և գետակներն։ [1]

Բագրեւանդայ գիրքն յարեւելից և յարեւմտից բարձր լինելուն, երկու կողմն ևս բազմաթիւ գետակներ լինելով որք գետ կազմելով հանդէպ միմեանց կը հոսին, Ալաշկերտի գաշտի միջավայրն կը միանան, ուր կատարեալ գետի կերպարանք առանալով կը հեռանայ Մուրատ [2] անուամբ։

Մուրատի երկու ճիւղերն կը յորջորջուին Շեռեան և Մուրատ։

Շեռեան Բագրեւանդայ արեւմտեան կողմէն կիզնայ դէպի յարեւելս, Ալաշկերտի գաշտի հարաւն և Ղլիճ—կէտուկի հիւսիսային սառոյտն քերելով կանցնի, իսկ Մուրատ յարեւմուտս կոյս հոսելով հանդէպ Դարաքիլիսայի, ուստի 1 ժամ ի հարաւ արեւմուտս Դարաքիլիսայի միանալով Մուրատի իբրև կանոնաւոր գետ մի կը քերէ կեռաձ լեռան արեւելեան սառոյտն, կանցնի Անգաւիի, Մանազկերտի և Ապահունեաց գաւառներու միջով, իւրաքանչիր գաւառ երկուքի կը բաժանէ, աջ ու ձախ դաշտային և լեռնային մասեր թողով։

Շեռեան իւր սկզբնաւորութիւնը կառնու Բիւրակնեան լեռներու յարեւելս գտնուած Կարաեազու լեռնագաշտէ, յարեւելս, յարեւելահիւսիս և հիւսիս հոսելով, կիզնայ Խալեազի լեռնագաշտն, այս տեղ դեռ չիջած՝ աջ կողմէն Մերկէ-Մեր լեռնէն ևս առատ ջուրդ առած էր։ 3—3 ½ ժամու չափ ևս Խալեազը ճեղքելով ուղղակի միջից կանցնի, ի ձախ թողլով վարելահողեր և ընդարձակ անհաշիւ մարգագետիններ, որք միշտ Դուամ կը տարածուին։ Խալեազի վերջաւորութեան վերայ մի մեծ քարալերան [1] հարաւային ոտքն քերելով ի դաշտ կը խոնարհի Շեռեան։ խիստ խոր անդունդ մի կազմելով իւր հանդիպակաց գտնուած հսկայ լեռներու մէջ և շեղուելով արեւելահարաւն ի վայր, 2 ժամ հոսանք և յորձանք կազմելով խլացուցիչ շառաչմամբ ձայներ կարձակէ, ոլոր, մոլոր ի դաշտ կը խոնարհի, 3 ժամու չափ ևս նոյն ուղղութեամբ դաշտի մէջ առաջ գնալով՝ աջ կողմն մի փոքր գաշտագետին կը բաժանէ Շեռեանայ գլուխ անուամբ, որ գիւղախմբապետութիւն մի է, Շեռեան կը զարնուի խաստուր պիւղի հարաւային եղրին, Բրճոյի շղթայի հի սիսային ստորոտին, ուստի յարեւելս (քիչ հարաւախառն) կուղղուի մինչև Մուրատի

1. Գետակներն գարնան կը յորդին երկար միջոց հուն չեն ունենար, վասն որոյ ժողովրդեան բերնին մէջ գետ կը յորջորջուին։

2. Դէտէ Մուրատ անունով մի ուխտատեղի կայ Ամատ գիւղի բարձունքը բարձր քարալերան մի գագաթին, որոյ ստորոտն ևս կայ գեղի Մաքսուտ աստի գետակ մի կը հոսի, այս լեռնեն խոնար Դէտէ Մուրատի կամ Մաքսուտի ջուր անուամբ, որև թուրքմեններու ջուր, Ամատայ ջուր ևս կասուի։

1. Այս տեղ քարալերան գագաթը կառուցած է Արուզեթայ ժայռէ կոփուած հիանալի բերդն, որոյ յարևելս Արուզեթ գիւղն կայ, որ ըստ կարգին նկարագրելու եմ։

միացման վայրն, մերձ Տամրատ[1] գիւղին։ Այս շրջանին մէջ ալ կը թողու Բրճօյին, Ղլիճկէտուկի և Կեռաէի շրջանն, իսկ ձախ Ալաշկերտ գետառի ամրողջ դաշտն, ձախ ափին վերայ թողլով Բասրան, Շահնազար, Մարտոյ, Խասաուր, Գարասան, Դաւոյ, Զուբուկ, Զլկանի, Ղադի, Զալէ, Մոլլա-օղմանն, Բօշիկ, Դամղիան գիւղօրայքն և ալի վերայ Մօլլա զագէ, Ասաֆ, Ալբաս, երեք Գոմբեր, Քօյի, Պաղլցիկ, Եքմալ, Ղարասու։ Ջառօ և Ն.[2] Նաև այս մասն հակեալ գառիվեր մի կը կազմէ, որ ունի 10-իդ աւելի քրդական և 4 Թուրք գաղթական գիւղեր, որք 4 ժամ երկարութեան վերայ տարածուած են։

Մուրատ գետ, որ Դիատինի Հարաւային (Ծաղկանց) լեռներէն[3] կը բխի։ բազմաթիւ ճիւղեր ունի։ երկու մեծ ճիւղերն Ս. Ոսկեանց սրբավայրէն խոնարհ, Ջէրնալի ձորին ստորին մասին վերայ կը միանան։ այլ և այլ անուն ունին, այս տեղ, Կերմանների (Ջերմուկ) ձորի մէջ Մուրատ անուն կառնէ, ալ կոզմից կընդունի հարիւրաւոր բնաիր Ջերմուկներու ջրերն, որք տեսնողներու վերան մեծ տպաւորութիւն կը թողուն, ապա կանցնի կրային ջրէ կազմուած բնական մեծ կամարջի[4] ներքև իջ։ 2—2 1/2 ժամ ևս ի հիւսիս շարունակելով իր ընթացք, տակաւ առ տակաւ կը շեղուի յարևմուտս, յանկարծ դուրս կգայ, կը յայտնուի Դիատինայ դաշտի մէջ և Դիատին գիւղաքաղաքին եզրն քերելով կը սողայ, կանցնի Զիրաւայ դաշտի միջէն, կուղղուի Նպատայ հիւսիսային ստորոտն, ի ձախ կը թողու Ղարապաղար և Ձուճան հայ գիւղօրայքն և յալ Պարսկաստանի կարաւանի ճանապարհն։ ապա կը քերէ Նպատայ արևելեան հիւսիսային ոտքն, ուր Ս. Գրիգոր հայոց բիւրաւորներն մկրտած է, ջուրն իր ընթացք ի հիւսիս յարևմուտս շարունակելով կը քերէ այս լերան արևմտեան հիւսիսային ոտքն, կանցնի հինաւուրց շինած կամուրջի մի տակից։

Ջուրը այս ընթացքի մէջ ի ձախ Նպատայ ստորոտը գոգին մէջ կը թողու զԲագուան,[4] այժմեան Ս. Յովհաննու վանքն (Խէչրիխան), որ երեք կողմէն շրջապատած է Նպատայ, ի հիւսիսից պատած է նաև Մուրատ։

Մուրատ իր ընթացք նոյն ուղղութեամբ օձապտոյտ կը շարունակէ, երկու ժամ ընթացքէ յետոյ կը դարնուի մեծ մեծ ժայռերու, որք հրաբուխային ժայռեր կը կարծուին և Ինակ լեռներէն գլորուած։

Մուրատ իր ընթացք կը շարունակէ, տակաւ առ տակաւ կը պատահի աջ կողմից Ուիկոռ, վերին և ներքին Դաշի չայ, Ալա մասի (Ջկան ջուր), Եքմալ, Ջիրոյ, Ղազի, Եօնճալու և Ղարաբիլիսայ գիւղօրէից։ իսկ ձախ կողմից վանքի գիւղ. Ղումիսպուճախ, Ղումիուճա, Կօլասօր, Կեռակեռա (Խուլեր), Սոֆեան, Ղազարի, Գումիդեան, Տամրատ։[1]

ԳԵՏԱԿՆԵՐ

Բագրեւանդ. ունի նաև բազմաթիւ գետակներ, որք մեծաւ մասամբ Ջրարաշի լեռներէ ի հարաւ արևելս կը խոնարհին և բուն վա-

1. Տամրատ գիւղն որ նախ եղգիք կը բնակէին, այժմ Կարսից եկեսր թուրք գաղթականները կը բնակին, որ Ըճեանի և Մուրատի խառնուրդի մօտ, ձախ ափին վերայ գտնուած ժայռի վերայ հաստատուած են։

2. Ա. յս երկու գետաց ափերն ուռենուց փոքրիկ անտառակներով պատած է, առաջ կը գտնուի շիշխան կոչուած թուփն, որ 2—3 կանգ. բարձր կը լինի բազկի հաստութեամբ հազիւ բուն ունենայ, բունը սուր գամի նման փշերով պատած է, կարծր փայտ է և մանր կարմիր պտուղ ունի որ երախայք պտուկ կասեն։

3. Վանայ ճանապարհին վերայ Շիր կեռուկ կիրճն ուստի ջուրը ժայռերէ չըրչրալով կիջնայ։

4. Սորա վերան սալեր և մարդիկ այնչափ երթևեկած են, որ կամուրջի մէջ տեղն մաշած, եզրներն բարձր կանգնած են, որով արհեստական կամրջի ձև առած է և շոգեշարժ մեքենայի նման այլ և այլ ծակերից ջրացներ կգան։

1. Տեսնուած աւերակներ կը հաստատեն որ Բագուան ջրի աջն, հանդէպ վանքին լինելու է։

2. Վերջին գարու քանի աշխարհագիրներ կարծած են թէ Տամրատ Երասխի ափը կը գտնուի, մինչդեռ Մուրատ գետ յարևմուտս գարձած վայրը ձախ կողմն կազմած անկեան միջավայրն կայ։

զարշակերտի դաշտի մէջ նոյն ուղղութեամբ հոսելով ձախ կողմից Շեռեանայ կը խառնուին, քանին և ս ի հարաւ արևմուտս խոնարհելով՝ Բագրեւանդայ Գարաքիլիսայի մօտերից անցնելով՝ Մուրատ կը թափին աջ կողմից։

Մենք թողլով վտքր ջրերն, 10-ի չափ մեծ ջրերու վերայ մասնաւոր ակնարկ ձրգեմք, որք ժողովրդոց մէջ ԴԵՏ կամ ՋՈՒՐ անունը ունին, որք գարնան անհուն կը զառնան, ամրան մեծ մեծ առուներով դաշտի վերայ կը բաժանուին, գիւղացւոյն բերքը կը քառապատկեն, այնպէս որ շատ գեռատկներու մէջ կաթիլ մի ջուր չգտնուիր։[1]

1· Չեռլկան կամ Ջաթ գետ·—Ա յս գետակը երկու ճիւղ ունի, որք կը բղխին Մուկաւէտի արևմտեան և արևմտեան հիւսիսային (Չաճի կէտուկից) կողերից, որք տակաւ առ տակաւ իրար միանալով նախ յարևմուտս, ապա հարաւ և Ջաթ գիւղի ստորոտն ի հարաւ յարևելս կուղղուի, 3 – 3 $^1/_2$ ժամ ընթացքէ մի յետոյ դաշտ կիջնայ, դաշտի առաջին գիւղի, Չեռլկանի հարաւ արևմտեան եղրն քերելով իւր ընթացք կուղղէ դէպի Շեռեան, ձախ ափին մօտերն թողլով Խոշեան, Մասրի և Ջուրուկ գիւղերն, իսկ աջին վերայ Դաւոյ, որ Շեռեանայ ձախ ափին վերայ է, ուստի կը խառնուի Շեռեանայ։

Չեռլկանայ ջուրն ձախ կողմից կընդունի Ա ե—զրաւ (բարակ ջուր) ջուրն, որ կարմիր վանքից կիջնայ։ Մի այլ ջուր և ս Ղռաւ կամ Դռաւ (բորի ջուր) անուամբ կը բղխի վտքր Մուկաւէտի հարաւային ստորոտից, կիջնայ դաշտ, կը քերէ Մօլա—Սիւլէյման գիւղի արևմտեան եղրն, ընդ մէջ դաշտին կը միանայ Չեռլկանայ ջրին։

2· Ղօփուզ գետ·—Ա յս ջուրն և ս կսկիծ Մուկաւէտի հիւսիսային կողերից, նախ յարևելս՝ ապա արևելեան հարաւ ուղղուելով կը քերէ մեծ Մուկաւէտի արևեան ստորոտն, երկու Ղօփուզ (վերին և ներքին) գիւղերու արևելեան հիւսիսային եղրն, ապա Գիլրան ստրի արևելեան ստորոտն, Ամրոց քարերու արևմտեան ոտքն, կը մտնէ դաշտ՝ բաժանելով երկու Մուկաւէտներն և Գիլրան կամ Հորերու քիլէ կոչուած ստրն յաջ յարևմուտս, իսկ Շահիոլ լեռներն ի ձախ (յարևելս)։ Նոյն ուղղութեամբ կը յառաջանայ մինչև Շամեան դաշտի մէջ և բաժանելով Մօլա—Սիւլէյման գիւղի հիւսիս արևելեան եղրն կը քերէ, Ղազի և Զրկանի գիւղերու միջից անցնելով Շեռեան կը թափի։

Ա յս գետն և ս իւրեան օժանդակ կընդունի ձախ կողմից Շահիոլ լեռներու ջուրն, որ հանդէպ Ներքին Ղօփուզ գիւղի կը միանայ այս գետին։

3· Խոյրուայ գետ կամ Մանուկներ·—Ա յս և ս կը բղխի Մուկաւէտի հիւսիս արևելեան հեռաւոր լեռներէ, որ և Մանուակներ կը կոչուի, լեռնահովտէ մի կսկիծ, 3 $^1/_2$-4 ժամ յարևելս կը ձգուի մինչև Ա ւետարբ գիւղի ստորոտն, ուստի ձախ կողմից կընդունի Դաբաւներ ջուրն, կը դառնայ արևելեան հարաւ, աստի 2 ժամէն կիջնայ ի դաշտ՝ աջ բաժանելով Ալաչկերտի և ձախ Խոյրուայ քաշանները,[1] իւր ուղղութեամբ կը շարունակուի դաշտի մէջ, կանցնի Մէմոան և Սողանցիք գիւղերու արևմտքից, Ղազի գիւղի արևելքից, կը թափի Շեռեան։

Ա ետարբից վեր ներքև և ս կընդունի ձախ կողմից Աշանայ ջուրն։

4· Ա մատ գետ, կամ Դէտէ Մուրատի ջուր և կամ Կալոյի ջուր·—Ա յս ջուրը կսկիծ Ջամլէ մեծ և բարձր լերան արևմտեան հարաւայի կողերից, նախ նեղ քանի ձորակներով կսկիծ, ապա տակաւ առ տակաւ ձո-

---

1· Գարաքիլիսայի երկու կողմէ իջնող Դաշլի և Քօր գետակներն մշտատև են, որք իրրև գետ միշտ առատ ջուր ունին։

1· Գիւղի մը ամբողջ տարածութիւնը իւր սահմաններից ներս քաւշան կոսուի ըստ քրդաց։

բահովիտս կընդլայնի և կը ձգուի չորս ժամ արևմտահարաւ՝ ալ կողմից կընդունի քանի մանր օժանդակներ և մեծ ճիւղն (Զաթայ Ջուր)՝ որ Բօղազկփէ լեռնէ կիջնայ։

Չանդէպ Զաթայ Ջրի խառնուրդին ձախ կողմից կընդունի նաև Ցուխոյի Ջուրն՝ որ սա ևս Զամչէ լեռնէ կիջնայ։

Կալոյի Ջուրն արևմտահարաւ շարունակելով մինչև Դէմէ Մուրատ[1] Մեծ քարալեռնէն՝ որը կը մնայ Ջրի եռանկեան միջավայրը՝ ուստի յանկարծ կը դառնայ արևելահարաւ՝ աստի ի վայր Դէմէ Մաքսուտ անուամբ ի դաշտ կը խառնուի՝ դաշտից ևս Ամատայ Ջուր անուամբ կանցնի Ամատայ և Թուրքմէնների մէջ տեղից՝ Խրիցու գիւղի արևելքից՝ Քարձորի արևմտեան եզրէն՝ Բլուրի արևելքից՝ Միրանկներու և Բօշիկի արևմտքից՝ կը խառնուի Շեռեանայ։

5• Ախտի գետ[2] (Ագռից ձոր) և Մէրկեզների գետակ։ — Դեսի չափ ընդարձակութիւն ունեցող գետակս երկու մեծ ճիւղերէ կը կազմուի• մինը Զամչայ մեծ լերան կողերից կը բղխի՝ կիջնայ ի հարաւ՝ Մերկեզների[3] կամ Դիւաւանայ Ջուր անուամբ՝ և քանի դաշտ չէ ընդած մեծ ոլորումներ կը կազմէ• իսկ երկրորդ ճիւղն է Ախտի կամ ձէմի—չաթոյի Ջուրն՝ որ Ախտի և Սինակ լեռներէ չորս ժամու չափ յարևմուտս կը խոնարհի՝ անցնելով Ախտայ անուամբ չորս ամիսոլեալ գիւղերու միջից մինչև ձէմէ—Զաթոյ• ցայս վայր ընդունելով այլ և այլ օժանդակներ՝ կը դառնայ արևմտեան հարաւ՝ 2 ½-3 ժամ ընթանալէ յետոյ՝ Դառապի գիւղի ստորոտն կը միանայ Մերկեզեր գետակին• Դաշտի անուամբ դաշտի մէջ կերկարի ի հարաւ• ներքին Դառապի՝ երանոս գիւղերու և Գարաքիլիսէի արևմուտքից անցնելով՝ կը խառնուի Քօր գետ՝ կը թափի ի Մուրատ և ապա ի Շեռեան՝ Դաշտին կը բաժանէ Գարաքիլիսէի և Ալաշկերտի գայմագամութիւնները։

6• Մանկասարայ Ջուր• — Այս Ջուրը Սինէկայ շղթային կօլկենի սարի կողերից կիջնայ խիստ զառիվայր մի• երեք ժամ ընթացքէ մի յետոյ երկու մասի կը բաժանուի• մին հարաւ կը թափի՝ Աւէ մասի (Ձկան Ջուր) անուամբ՝ Հանդէպ Կօլասօր գիւղին Մուրատի կը խառնուի՝ իսկ մեծ ճիւղն Դաւփղան գիւղի հարաւային եզրն քերելով դաշտ կիջնայ հարաւ արևմտեան ուղղութեամբ՝ կանցնի Մանկասար և Խզղըր գիւղի միջից՝ Նաւիկ և Զամրլու գիւղերու հարաւից՝ Խրիցու գիւղի (Զալջուռ իշխանի Խրիցու գիւղ) արևելքից իջնող Տօռօ Ջրոյն միանալով՝ Քօր գետ անուամբ կանցնի Գարաքիլիսէի արևելքից՝ նաև հարաւային եզրն քերելով՝ յարևմուտս շեղուելով՝ կը խառնուի Դաշլի գետոյն և կը թափին Մուրատի մէջ։

Բայ ի այս գետակներէ որ մշտական Ջուր ունին և ժողովուրդն գետ կանուանէ՝ կան նաև Ջուր առած գետակներ՝ որք բաղմաթիւ են՝ ամրան կը չորանան։

Նաև կան անհաշիւ ձորակներ՝ առու և առուակներ՝ որք երբեմն ուղղակի Շեռեանայ և Մուրատի մէջ կը թափին կամ գետակներից միոյն միանալով անուանդ կը տան։

Լիճ եւ Լճակներ

Ջրաբաշխի շղթայն իր վերայ կը կրէ մեծ և փոքր լճեր՝ որք շղթայի վերան՝ կամ այս ու այն երեսին վերայ ղեռնղուած են։

Արևմտեան կողմից Սինակ լեռներով շրջապատուած կայ Պալղիօլ (Ձկան լիճ) ծովակն՝ որ է Դայլատայ լիճն՝ և ունի բարձր դիրք՝ 3—4 ժամ շրջապատ՝ առատ և ընտիր

1• Այս մեծ քարալերին գլուխը և ստորոտը ուխտատեղիներ կան Ցէմէ Մուրատ և Մաքսուտ անուանով՝ քրդեր շատ անգամ՝ երբեմն հայք ևս ուխտի կը գնան։

2• Սինակ լերան կամ Ջրաբաշխ լեռներու շղթաներէն մին է որ կը գանուի ընդ մէջ Կողբայ և Գարաքիլիսէի։

3• Մարգազէտ կամ Մերկեզար քրդերէն կը նշանակէ գեղին մարգ՝ կամ ոսկեմարգ՝ արդէն այս վայրի մարգերն ընդհանրապէս գեղնագոյն ծաղկօք կը զարդարուին։

ձուկ, յարգի է խոշոր կարմրախայտն, հիւսիսային եղրին մօտ գանուած կղզեակին վերայ կը տեսնուի վարդանակերտ կոչուած բերդի բեկորներն։

Ա յս ծովակը եւս նման Բագրեւանդայ պաշտպանին ձուաձեւ դիրք ունի սուր կողմն ուղղուած է նոյնպէս ի հարաւ արեւելս եւ դէպի Պայազիտ, ուստի չուր մի դուրս դալով Սարիբէդ հայ գիւղի մօտեն կանցնի, կուղղուի ի Պայազիտ, որ Մակուայով կանցնի, երասխ կը թափի։

Ծովակս տարիկ կառավարութեան կը պատկանի, կառավարութիւնը ամրդոյ վաճառած է մի հայի, որը ռուսական սահմանի մէջ եղող Աբաս կոլ գիւղէն ձկնորսներ կը վարձէ, առատ ձուկ կորսայ Ռուսաստանի մէջ կը վաճառէ։

Ձմեռն չորս ամսոյ չափ կը սառի. վերան երթևեկութիւն կը լինի. հազարաւոր անասնոց խմբեր կերթան, կը գան, տեղ տեղ քրդեր ծակ կը բանան, կարթով և ինչ ինչ հնարներով ձուկ կորսան։

Ծովակս կայ կողմայ և Բագուանայ միջավայրն Սինակ լեռներու գագաթին, երկուքից եւս $3\frac{1}{2}$-ական ժամ հեռի. հիւսիսային առորոտը կրնկնի կողր, իսկ հարաւային Բագուան, 10 ժամ յարեւելս Գարաքիլիսայի և արեւմտեան դաշտի։

Աբասկոլ.—Գայլատայ ծովակէն $\frac{3}{4}$ ժամ ի հիւսիս Աբասկոլ գիւղի մօտ կայր մի լճակ, որա մօտ գանուած երեք գիւղացիք (հայ) առաջն պատնէշ հիւսելով՝ մեծ լիճ մի գարձուցին, ուստի տարւոյն երեք եղանակներուն մէջ առատ ջուր կր առանան իւրեանց արտորայքն ջրելու համար։

Կօլկենի (նեխեալ ջուր) որ Սինակ լեռներու հարաւային կողերու վերայ փոքրիկ լիճ մէ, կայ նաև լճակ մի թանաուրակայ կողերուն վերայ և Մերկեզերի բարձունքը նա և երկու ուրիշ լճակներ։

Ձուխուր չամ (խորացեալ եղեւնեաց անտառ) մեծ լիճ է. Աղբուլախ լերան հիւսիս արեւմտեան կողին բարձունքը, եղեւնեաց անտառի մի միջավայրն, ուստի կը բղխի կապուտայ ջրի միջին, մեծ ճիւղը։

Պախրկոլ (պղնձեայ լիճ) որ կապուտայ բերդի հիւսիսն և Խանաուտայ հարաւն, երկարին եւս մօտ կայ։

Կօյա տէյրան (բազէ լիճ), որ Մատուռայ ջրի սկզբնաւորութիւնը կը կազմէ։

Շահկոլ, որ Ղօփուզ ջրոյն մէկ ճիւղն կը կազմէ, Աղրկոլ եւն. նաև Կօյա Հայրան լիճն Խալեազի լեռներու վերայ։

Տեսած եմ բազմաթիւ փոքր լճակներ. որոց անունը գժբաղդաբար չեմ յիշեր. լսած եմ մեծ և փոքր լճակներ Խալեազի և Ծաղկանց լեռներու վերայ, որք մեծ մեծ ջրերու սկզբնաւորութիւն կտան։

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Բագրեւանդ ունի երկու արքունական ճանապարհ, որոց մին հին Շահնօլին է, որ Ջրաբաշի լեռներու գագաթից ձգուած, երկրորդին գաշտի միջով կանցնի, որ այս օր խճուղի շինուելու վրայ է և այս ճանապարհն ի Պայազիտ՝ ուստի ի Պարսկաստան կը տանի։

Կան բազմաթիւ ժողովրդական ճանապարհներ, որոց գլխաւորներն են, ի Խնուսայ եկող ճանապարհն, որ Բրճոյի կրճով գաշտս կիջնայ, Խաստուր Մօլլա – Սիւլէյման և Ղօփուզ գիւղերով կանցնի Ռուսական սահմանը, ուստի ի կարս. երկրորդն է Մշոյ, Պուլանխ և Մանազկերտէ եկող ճանապարհն, որ Անդափ և Ղյիճ—կէտուկ անցնելով գաշտիս առաջին գիւղն Զըլկանի (ի հարաւոյ) կիջնայ, Թօփրագ գալէսի, ուստի Բօզմէխէով և Աղբուլախով կանցնի կաղզուան, ուստի կարս, երրորդն է Արճէշի եւն. ճանապարհն՝ որ Բադնոցէ և Խամուրէ Գարաքիլիսէ մտնելով ուստի Մերկեզերի բարձունքը եղած Ջամչի լեռնով ի կաղզուան և Ախտով կամ Սինակ լեռներով ի կաղր, ուստի Իգդիր և Վաղարշապատ ու Երեւան։ Չորրորդն է Վանայ ճանապարհն, որ Դի՝ Սինիից անցնելով Բարթող լեռներու գագաթով կաղր, Իգդիր կիջնայ։

ՇԱՀԵՕԼԻ

Շահ եօլին Շահի ճանապարհն է. ըստ ումանց Սուլթան Մուրատի գաղտնի ճանապարհն է, որ Աւրպատականէ, Խոյայ և Մակուայ միջի լեռներէ կանցնի, կը մտնէ Ալաշտաղ, կերկարի Պայազիտի հարաւային լեռներու գագաթից դէպ ի յարեւմուտս, մինչև Դիատինի մերձակայներն, ուստի կուղղուի ի հիւսիս արեւմուտս, կտրէ, կանցնի Խիեկայ կետուկն, և Դիատինի արեւելեան հիւսիսից կը բարձրանայ Բագրեւանդայ հիւսիսային լեռնաշղթային գագաթն և շղթայի ուղղութեամբ լեռնէ լեռ կը ձգուի մինչև Դուամ մերձ Տահար գիւղին, ուստի հարաւային արեւմուտք շեղելով կանցնի Բասեանի հարաւային լեռներու գագաթից, բին կոլի հիւսիսային կողերից, լեռնէ լեռ կը մտնէ Կարին։

Այս է հինն Շահ եօլին՝ որ այժմ տեղ տեղ գործածելի է լեռնային ժողովրդոց համար

Շահ եօլին՝ որպէս ասացինք, ձգուած է միշտ այս շղթայի գագաթից, որ այժմ հետքը տեղ տեղ բոլորովին կը մնայ և զեռապս յապուշ կը կրէ է, տեղ տեղ դժուարամատչելի ժայռեր են պեղած, տեղ տեղ խիստ հակեալ կողերն են ճեղքած, տեղ տեղ ցած լեռներու գագաթներն են հարթած, որով կարելի արած են անհպելի սարերու գլուխ ներէն ղինուորական պիտոյք կրել, անարգել երթևեկել, բանակներ անց ու դարձ առնել։

Շահեօլին լինելու է Ջամչեանի ասած «Ուշ եդեալ ընդ պողոտայն արքունի», հասանել ի գաւառն Բագրեւանդ, ի գիւղն Բագուան։ Որով կերևի որպէս պիրքն և այլ ցոյց կտայ, ժողովրդեան համար գործածելի չէր. այլ արքունական պէտքի միայն գործածուած էր։

Արարատեան նահանգի հարաւային շրջթային վերայ, ուստի կանցնէր Շահեօլին, երթևեկող բանակն ապահով շարժման մէջ էր, ի հիւսիս երասխը և երասխայ հովիտը մի ամենթարթով կը տեսնէր, ի հարաւ ամբողջ Բագրեւանդ, որով պէտք էր թշնամիէն զգուշանայր և ցմիշտ պատերազմի համար յարմար դիրքի մէջ գտնուէր։

Թերևս այս ճանապարհին շինութեան երկրորդ պատճառն ևս լինելու են Բագրեւանդայ ընդարձակ ջրերն, որ գարնան կառատանան, հուն չունին, շատ անգամ բանակի երթևեկութեան արգելք եղած լինին։

Ըստ եղի ժողովրդեան աւանդութեան, այս ճանապարհն շինուած է գաղտնի բանակ անցնելու համար։

(Շարունակելի).

Ս. ՀԱՑԿՈՒՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՆԴԱԳԱՑ ՊԱՐՈՅԴԱՆ ՔԱՀՈՒՆ։

(Շարունակութիւն)*

Էոփալօցի։ Սրա գործերի ընդհանուր գնահատութիւնը երևում է այն մահարձանից, որ դրուած է նրա գերեզմանի վրայ՝ Բի՛էրում, որ գտնուում է Զուիցարիայի Արգաու կանտօնում Սոյհօֆի մօտ։ Այդ մահարձանի վրայ գրուած է. «Այս տեղ հանգչում է Հէյնրիխ Պէստալօցցին, որ ծնուել է Ցիւրիխում 12 յունուարի 1746 թ. վախճանուել է Բրուգում 17 փետրուարի 1827 թ. Նա է փրկիչ աղքատ երեխաների Նոյհօֆում, որերի հայր Ստանցում, հիմնադիր ժողովրդական ուսումնարանի Բէրտուում և Միւնխէնբուքսէնում, սա է համաշխարհային կրթիչ Իվերդօնում, քրիստոնեայ, քաղա-

*) Տե՛ս նախընթաց համարը։